Աննա
ՓԱԽԼՅԱՆ

Տնտեսագիտության
թեկնածու

2006 թ. ավարտել է ԵրՊՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ)՝ «Համաշխարհային տնտեսագիտություն» մասնագիտությամբ, իսկ 2010 թ.՝ ՀՊՏՀ ասպիրանտուրան՝ «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ՝ պաշտպանելով թեկնածուական ատենախոսություն և ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի ասիստենտ է, «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հրավիրյալ փորձագետ: Հեղինակ է 40 գիտական աշխատանքների:

ԱՇԽԱՐՀՆ ԱՌԱՆՑ «ԱՐՅՈՒՆՈՏ» ԱԴԱՄԱՆԴՆԵՐԻ

Հիմնաբառեր. *«արյունոտ» ադամանդ, զինված հակամարտությունների և ահաբեկչության ֆինանսավորում, ապօրինի շրջանառություն, Քիմբերլի հավաստագիր*

Ըստ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) եզրաբանության՝ «արյունոտ» կամ «կոնֆլիկտային» (որոշ դեպքերում նույնիսկ՝ «պատերազմական», «թեժ» կամ «կարմիր») եզրույթը բնորոշում է 1990-ական թվականներից մի խումբ աֆրիկյան երկրներում, մասնավորապես՝ Անգոլայում, Սիերա Լեոնեում, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում, Լիբերիայում և Կոտ դ'Իվուարում տարածված ալմաստների (անմշակ ադամանդների) ստվերային շրջանառությունը, որից ստացված հասույթն ուղղվում է զինված հակամարտությունների և ահաբեկչական գործողությունների ֆինանսավորմանը:

Անգոլայում, Սիերա Լեոնեում և Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում (ԿԴՀ) ապստամբական խմբերն ադամանդի հումքի ստվերային վաճառքի հաշվին հոգում էին պատերազմական գործողությունների (զենք ու զինամթերքի ձեռքբերման, զորքին վճարելու, կերակրելու և այլնի) հետ կապված ծախսերը: Անգոլայում այդ խմբերի հրահրմամբ 1975-2002 թթ. տեղի ունեցած քաղաքացիական պատերազմի ընթացքում զոհերի թիվը գերազանցել է 650.000-ը, Սիերա Լեոնեում հակամարտությունը շարունակվել է շուրջ տասը տարի (1991-2002 թթ.)՝ պատճառելով 75.000 զոհ, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում 1998-2002 թթ. քաղաքացիական պատերազմի հետևանքով զոհվել է 3-3.5 մլն մարդ[1]:

Գոյություն ունի պաշտոնական վարկած, ըստ որի՝ ԱՄՆ-ում «Ալ-Ղաիդա» ահաբեկչական խմբավորման

[1] Kayome M., "United Nations Resolutions and the Struggle to Curb the Illicit Trade in Conflict Diamonds in Sub-Saharan Africa". African Journal of Legal Studies. The Africa Law Institute. 2: 2005, 80–101.

կողմից կազմակերպված 2001 թ. սեպտեմբերի 11-ին հարձակումը նյույորքյան առևտրի կենտրոնի «երկվորյակ» շենքերի վրա նույնպես ֆինանսավորվել է ադամանդների ապօրինի վաճառքից ստացված միջոցների հաշվին[2]:

Այդուհանդերձ, ոչ մարդկային զոհերը, ոչ էլ Միավորված ազգերի անվտանգության խորհրդի (UNSC) կողմից բոլոր երեք երկրներում «արյունոտ» ադամանդների շրջանառությունն արգելող մի շարք բանաձևերի ընդունումը (1998 թ. ընդունված 1173 և 1176 բանաձևերով[3] էմբարգո է սահմանվել անգոլական ադամանդների ապօրինի վաճառքի նկատմամբ, իսկ 2000 թ. հուլիսի 5-ին ընդունվել է Սիերա Լեոնեում ադամանդների ապօրինի վաճառքն արգելող 1306 բանաձևը[4]) այդպես էլ չստացան միջազգային հանրության համարժեք աջակցությունը: «Կոնֆլիկտային» կամ «արյունոտ» ադամանդների առուվաճառքը շարունակվել է՝ ի հեճուկս ՄԱԿ-ի «աղաղակող» բանաձևերի ու էմբարգոների: Պատճառը, թերևս, ադամանդի համաշխարհային շուկայի մասնակիցների տնտեսական շահի գերադասելիությունն էր միլիոնավոր մարդկանց ճակատագրերից... Ըստ այդմ, հիմքեր կան կարծելու, որ «քաղաքակիրթ» աշխարհում ադամանդի համաշխարհային բիզնեսի «շնաձկները» (Բելգիա, ԱՄՆ, Իսրայել) որևէ կերպ ներգրավված են այդ «արնախում գործարքներում»:

Բայցևայնպես, աշխարհի առջև «քաղաքակիրթ» դեմքը չկորցնելու նպատակով Եվրոպայում իրականացվել են ադամանդի առևտրի գրանցման սկզբունքների որոշակի «սրբագրումներ». մասնավորապես՝ ադամանդի համաշխարհային շրջանառության խոշորագույն կենտրոն համարվող Բելգիայում դրա առուվաճառքի փաստաթղթավորման պատասխանատու՝ «Ադամանդի բարձրագույն խորհուրդ» (Diamond High Council) ոչ առևտրային կազմակերպության գրանցման համակարգում որպես ներմուծվող ադամանդի ծագման երկիր է նշվում այն վերջին անգամ արտահանած երկիրը: Փաստորեն, կախված մի առևտրային կենտրոնից մյուսը կատարած «ճամփորդությունից», Անգոլայի, Սիերա Լեոնեի կամ ԿԴՀ ծագման ադամանդները կարող են գրանցվել որպես Լիբերիայից, Գվինեայից, Իսրայելից, Հնդկաստանից կամ Միացյալ Թագավորությունից Բելգիա ներկրվածներ[5]: Մեկ այլ տարբերակում, օրինակ, Անգոլայում արդյունահանված ալմաստները վաճառվում են Կամերունում, որտեղ դրանց համար ձեռք է բերվում կամերունյան ծագման հավաստագիր՝ այդպիսով օրինականացնելով դրանց հետագա վաճառքը: Սիերա Լեոնեում կամ Անգոլայում արդյունահանված անմշակ ադամանդների տպավորիչ խմբաքանակներ են իրացվել Լիբերիայի[6] միջնորդությամբ, որը կարճ ժամանակում ապահովեց ադամանդի սեփական արտադրական հնարավորությունները բազմակի գերազանցող արտահանման ծավալներ: Ահա թե ինչ ճանապարհներով են աֆրիկյան «արյունոտ» ալմաստները հայտնվում Անտվերպենի բորսայում, որտեղից էլ՝ մատակարարվում աշխարհով մեկ:

Այդուհանդերձ, ադամանդների ստվերային շրջանառությունը կանխարգելելու նպատակով ստեղծվել է միջազգային հավաստագրման համակարգ, որը վերահսկելի է դարձնում անմշակ ադամանդների շարժը համաշխարհային շուկայում: Ներկայում ալմաստի համաշխարհային առևտուրը կենտրոնացված է «կոնֆլիկտային» ադամանդների առևտրի դա-

---

[2] "Illicit Diamonds, Conflict and Terrorism: The Role of U.S. Agencies in Fighting the Conflict Diamonds Trade" / Hearing before the Oversight of Government Management, Restructuring, and the District of Columbia Subcommittee of the Committee on Governmental Affairs United States Senate, 107th Congress, 2nd Session, February 13, Washington 2002 (https://www.govinfo.gov/content/pkg/CHRG-107shrg78621/html/CHRG-107shrg78621.htm) .

[3] United Nations Security Council: Resolutions 1173 and 1176 (2001 June).

[4] United Nations Security Council: Resolution 1306 (2000, July 5).

[5] Փախլյան Ա., Ադամանդի համաշխարհային առևտուրը Քիմբերլի գործընթացի մասնակից երկրներում. միտումներ և մարտահրավերներ // Տնտեսության և հասարակության զարգացում. 21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: «Տնտեսագետ» հրատ., 2018, էջ 661-668 (https://asue.am/upload/files/Gitajoxovi-nyuter.pdf):

[6] Լիբերիան հայտնի է որպես ապօրինի ադամանդների և զենքի կուտակման, փողերի լվացման, ահաբեկչության և կազմակերպված հանցավորության այլ ձևերի թաքստոց:

դարեցմանն ու ադամանդի իրացումից ստացվող հասույթն ապստամբական շարժումների ֆինանսավորմանը ծառայեցնելու փորձերի կանխարգելմանը միտված «Քիմբերլի գործընթացի հավաստագրման ծրագրի» (ՔԳՀԾ) մասնակից երկրներում: Սկսած 2003 թվականից՝ անմշակ ադամանդի բոլոր միջազգային մատակարարումներն ուղեկցվում են դրանց օրինականությունը երաշխավորող Քիմբերլի հավաստագրով: Քիմբերլի գործընթացին մասնակից 55 կողմ ներկայացնում է 82 երկիր (Եվրամիության անդամ 28 երկիր հանդես է գալիս որպես մեկ մասնակից), որոնց բաժին է ընկնում ադամանդի համաշխարհային արտադրության 99,8 տոկոսը[7]:

Թվում է՝ Քիմբերլի գործընթացի մեկնարկով ադամանդի արդյունահանման և արտադրության ոլորտում առկա խնդիրները պիտի որ շրջանցվեին, սակայն համակարգում առկա թերացումների պատճառով դրան վերագրվում են «արյունոտ» ադամանդների առևտրի «հարմար հովանոցի» գործառույթներ: Մասնավորապես՝ հավաստագրման համեմատաբար նեղ պահանջները կենտրոնանում են արդյունահանված ալմաստների բաշխման վրա՝ անտեսելով բանվորների շահագործման, մասնակի վճարման և անչափահասների աշխատուժի օգտագործման դեպքերը[8]: Բացի այդ, Քիմբերլի հավաստագիր է տրվում ոչ թե շրջանառվող յուրաքանչյուր քարի, այլ որոշակի խմբաքանակի համար, որոնք այնուհետև կտրվում, հղկվում և առանց հետագա վերահսկողության շրջանառվում են ամբողջ աշխարհում՝ կորցնելով իրենց իրական ծագման հետքերը:

Փաստացիորեն, թեև Քիմբերլի հավաստագրման համակարգի ստեղծումից ի վեր ընդունված է համարել, որ «կոնֆլիկտային» ադամանդների ապօրինի շրջանառությունը չի հատում 1 տոկոսի սահմանագիծը, այդուհանդերձ, հիմնավոր կասկածներ կան, որ «արյունոտ» ադամանդների որոշակի մասը, աֆրիկյան երկրների միջև շրջանառվելով, ի վերջո, օրինականացվում է Քիմբերլի հավաստագրով և մուտք գործում ադամանդի միջազգային բորսաներ:

Հայաստանի Հանրապետությունը[9] Քիմբերլի գործընթացին միացել է 2002 թ. դեկտեմբերին՝ ՀՀ կառավարության N 2081-Ն որոշմամբ[10]: Ընդ որում, Հայաստանի մասնակցությունը հավաստագրման համակարգին հիմնավորվում է երկրում ադամանդների վերամշակման ավանդույթների առկայությամբ:

Չունենալով համապատասխան հումքային ռեսուրսներ՝ Հայաստանն ադամանդի արդյունահանման համաշխարհային բիզնեսում հանդես է գալիս որպես «երկրորդային խաղացող»՝ ներգրավվելով ներկրված ալմաստների հղկման գործընթացում:

Քիմբերլի գործընթացի վիճակագրության համաձայն՝ 2018 թ. ՀՀ է ներմուծվել 50.8 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ շուրջ 352.3 հազ. կարատ և ՀՀ-ից արտահանվել է 7.5 մլն ԱՄՆ դոլարին համարժեք՝ 46.1 հազ. կարատ անմշակ ադամանդ: Ներմուծված խմբաքանակներն ուղեկցվել են 123, իսկ արտահանվածները՝ 20 Քիմբերլի հավաստագրով[11]: Արտահանման և ներմուծման ցուցանիշների նման համամասնությունն օրինաչափ է համարվում, քանզի ներմուծված ադամանդի հումքն արտահանվում է միայն համապատասխան վերամշակումից հետո, իսկ մշակված ադամանդի առևտուրն առայժմ չի վերահսկվում՝ ըստ Քիմբերլի գործընթացի:

Ու թեև չկա որևէ վիճակագրություն «արյունոտ» ադամանդների՝ ՀՀ ներկրման

[7] https://www.kimberleyprocess.com/en/participants

[8] Rhade D., The Kimberley Process is a 'perfect cover story' for blood diamonds, The Guardian, 24 March 2014,- https://www.theguardian.com/sustainable-business/diamonds-blood-kimberley-process-mines-ethical

[9] Տես Փախլյան Ա., Հայաստանի Հանրապետությունը «ոչ կոնֆլիկտային ադամանդների» համաշխարհային շուկայում // «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի» գիտական հանդես, թիվ 3(31), 2013 թ., Եր.: «Տնտեսագետ» հրատ., էջ 118-132:

[10] «Քիմբերլեյ գործընթացին Հայաստանի Հանրապետության կառավարության միանալու մասին» ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 19-ի N 2081-Ն որոշում:

[11] Annual Global Summary: 2018 Production, Imports, Exports and KPC Counts, Summary Report, June 25, 2019, (https://kimberleyprocessstatistics.org/static/pdfs/public_statistics/2018/2018GlobalSummary.pdf)

վերաբերյալ, մեր կարծիքով, դա ամենևին չի կարելի բացառել: Թեև տարբեր տարիների Հայաստանն աֆրիկյան «կոնֆլիկտային» երկրներից (Անգոլա, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն, Սիերա Լեոնե, Կոտ դ'Իվուար) որոշակի խմբաքանակներով ադամանդ է ներկրել, սակայն դա կայուն բնույթ չի կրել, և «արյունոտ» ադամանդների ներհոսքը մեր երկիր ավելի շուտ հնարավոր է ապրանքախմբի գծով ՀՀ հիմնական առևտրային գործընկերների՝ Բելգիայի, Իսրայելի, Միացյալ Արաբական Էմիրությունների, ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Շվեյցարիայի միջոցով:

Ուշադրության արժանի է նաև ադամանդի՝ մարքեթինգային տարբեր հնարքներով ու մոլորություններով ձևավորված հեղինակությունն ու դրանով պայմանավորված «արհեստածին» պահանջարկը:



Տարածված մոլորություններ ադամանդի վերաբերյալ.

- *Ադամանդե մատանու՝ որպես սիրո խոստովանության և ամուսնության առաջարկի անառարկելի փարրի ընկալումը համաշխարհային հանրության շրջանում սերմանվել է ոչ այնքան վաղ անցյալում (1940-ական թթ.)՝ հիմնականում հոլիվուդյան ֆիլմերում համապատասխան տեսարանների նկարահանումների ֆինանսավորման ճանապարհով: Եվ դա ոչ այլ ինչ է, քան ադամանդի համաշխարհային բիզնեսի առաջատար ընկերությունների կանխամտածված և, ինչու չէ, հաջողված մարքեթինգային հնարք: Ավելին, համաշխարհային շուկայում ադամանդի դիրքավորման և դրա նկատմամբ «հավերժական պահանջարկի» ձևավորման մարքեթինգային արշավը հանգեցրեց նրան, որ մինչ օրս հասարակության բավական լայն շերտերի մասնավոր ընկալումներում փեսացուի նվիրաբերած մատանու ադամանդի զանգվածն «ուղիղ համեմատական» է նրա սիրո մեծությանը:*
- *Ադամանդներն իրականում այնքան էլ հազվագյուտ ու սահմանափակ չեն, ինչպես ընդունված է համարել աշխարհում: Դրանց զգալի մասը գնում և պահեստավորում են խոշոր ընկերությունները (De Beers)՝ առաջարկի աճով պայմանավորված գների անկումից խուսափելու նպատակով:*